

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի
ֆակուլտետի խորհրդի 2022թ. հոկտեմբերի 4 –ին ժ. 14:30 –ին 302 լսարանում

տեղի ունեցած թիվ 1 նիստի:

Խորհրդի 27 անդամներից նիստին մասնակցում էին 23-ը:

Օրակարգ

1. Ֆակուլտետի խորհրդի 2022-2023 ուսումնական տարվա աշխատանքային ծրագրի քննարկում և հաստատում:

Զեկ. Գ. Դեմիրխանյան

2. 2021-2022 ուստարվա առկա ուսուցման երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:

Զեկ. Ն. Օրդյան

3. 1-ին կուրսի մագիստրոսական թեզերի քննարկում և հաստատում:

Զեկ. Ա. Թադևոսյան

Է. Կոկանյան

Լ. Ղուլդազարյան

Ա. Սահրադյան

4. Բակալավրիական կրթական ծրագրերի քննարկում և հաստատում:

Զեկ. Ն. Օրդյան

5. Ընթացիկ հարցեր

Քվորումը ապահովված էր, նիստը սկսվեց ժամանակին և հաստատվեց օրակարգը:

ԼՄԵՑԻՆ. – Ֆակուլտետի խորհրդի 2022-2023 ուսումնական տարվա աշխատանքային ծրագրի քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.– Գ. Դեմիրխանյանն ասաց, որ ՄՖԻ խորհրդի աշխատանքային ծրագիրը նախապես ուղարկվել է ՄՖԻ խորհրդի անդամներին ծանոթանալու համար և եթե կան դիտողություններ և առաջարկություններ ապա քննարկենք: Համլետ Միքայելյանն ասաց որ պետք է ծրագրում ընդգրկել մեթոդիկայի դրվածքը ֆակուլտետում: Գ. Դեմիրխանյանն ասաց,

որ դեմ չէ, բայց երբ դիտարկենք: Հ. Միքայելյանն առաջարկեց երկրորդ կիսամյակի մարտ-ապրիլ ամիսներին:

ՈՐՈՇԵՑԻՆ.- (Քվեարկության արդյունքում) Ավելացումով հաստատել ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի 2022-2023 ուսումնական տարվա աշխատանքային ծրագիրը:

ԼՍԵՑԻՆ.- 2021-2022 ուստարվա առկա ուսուցման երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Նունե Օրոյանը ներկայացրեց քննաշրջանի արդյունքները և փաստեց, որ հեռացվել են Դեմիրճյան Լուսինեն (երկրորդ կուրս, մաթեմատիկա), Բաղդասարյան Կարենը (երրորդ կուրս, ինֆորմատիկա)(արդեն մի անգամ հեռացված և վերականգնված ուսանող է), Մոսոյան Պետրոսը(երրորդ կուրս երկրորդ կիսամյակից, ֆիզիկա մասնագիտությունից, իր դիմումի համաձայն):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- 1-ին կուրսի մագիստրոսական թեզերի քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Գ. Դեմիրխանյանն ասաց, որ մագիստրատուրայի հեռակա և առկա առաջին կուրսերում ունենք 78 ուսանող և ամբիոններն ի վիճակի են տալ մագիստրոսական թեմաներ ըստ նորմերի: Ինտերնետում կան մագիստրոսական թեզեր, որոնք ավելի հետաքրքիր են քան թեկնածուական աստենախոսությունները: Լուսինե Ղուլղազարյանը զեկուցեց, որ մաթեմատիկա մասնագիտությամբ առկայում ունեն 18 ուսանող, իսկ հեռակայում՝ 14: Նա ասաց, որ տրված թեմաների վերնագրերում արվել են համապատասխան փոփոխություններ իսկ որտեղ որ չի արվել, ապա հիմնավորվել է թե ինչու չփոփոխել: Համլետ Միքայելյանն ասաց, որ թեմատիկայի առումով այս տարի, մի գլխով ավելի բարձր է, քան անցած տարվա թեմաները, միայն հստակեցնել ակնկալվող արդյունքները: Գ. Դեմիրխանյանն ավելացրեց, որ թեմաների վերնագրերը ուղարկվում են Կ. Վարդանյանին, հետո բլագիատով ստուգում են և ասում են լավ է թե ոչ: Ա. Մահրադյանն ասաց, որ տեխնոլոգիայի մագիստրոսները չորսն են և թեմաների վերնագրերի հետ կապված ամեն ինչ նորմալ է, արված են աննշան փոփոխություններ: Գ.Դեմիրխանյանն առաջարկեց, որ ինֆորմատիկայի և ֆիզիկայի ամբիոններն իրենց մագիստրոսական թեզերի վերնագրերը ուղարկեն, որ հարցման կարգով հաստատենք: Գ. Դեմիրխանյանն ավելացրեց, որ պետք է համեմատական վերլուծություն անել և վերջում անել առաջարկներ, պրակտիկայի ընթացքում քանիսն են կիրառվել, կամ էլ հողվածի տեսքով տպվել: Լ. Ղուլղազարյանը հետաքրքրվեց թե այս տարի մագիստրոսական թեզերի գրախոսությունները արտաքին են

լինելու, թե ոչ: Գ. Դեմիրխանյանն ասաց էթե գրախոսությունը ծավալի մեջ կա, ապա այն դրսից լինել չի կարող: Հ. Միքայելյանը հետաքրքրվեց թե մեթոդիկայից և մաթեմատիկայից քանի գրախոսություն գրող կլինի: Վ. Վարդազարյանն էլ փաստեց, որ մեթոդիկայի հետ կապված պրոբլեմներ կլինեն: Լ. Ղուղազարյանն ավելացրեց, որ գրախոսությունները ծավալում չկան:

ՈՐՈՇԵՑԻՆ.- (Քվեարկության արդյունքում) Հաստատել ներկայացված մագիստրոսական թեզերի վերնագրերը:

ԼՄԵՑԻՆ.- Բակալավրիական կրթական ծրագրերի քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Գ. Դեմիրխանյանը ասաց, որ նախարարության հրամանով ՄՖԻ ֆակուլտետում հաստատվել են մաթեմատիկա-ֆիզիկա և մաթեմատիկա-ինֆորմատիկա մասնագիտություններ: Կա նախարարի հրամանը, գիտխորհրդի որոշումը և մոտ ժամանակներում ամբիոնները կամ ամբիոնի վարիչները քննարկեն և մշակեն այդ ամենը: Ասատրյան Մամվելը ժողով կանի, դետալները կպարզվի և մեթոդական հանձնախմբով կքննարկվի: Մյուս տարվա ընդունելության քննություն են հանձնելու նաև հունվարին: Նույն Օրդյանն ավելացրեց, որ պետք է կազմվի փաթեթ նոր մասնագիտությունները լիցենզավորելու համար: Նույն Օրդյանը ներկայացրեց բակալավրիական կրթական ծրագրերի պահանջները և կատարված փոփոխությունները: Նա ասաց, որ նախարարությունը սովել է ինֆորմատիկայի մասնագիտության վերջարդյունքները, որի հիման վրա լրամշակվել է ինֆորմատիկա մասնագիտության բակալավրի կրթական ծրագիրը: Նա առաջարկեց այս նիստով հաստատել ՄՖԻ մասնագիտությունների լրամշակված բակալավրի կրթական ծրագրերը: Հ. Միքայելյանը ասաց, որ իր կարծիքով միասնականության տեսակետից միասնական չեն: Տ. Այվազյանն էլ հավելեց, որ տարբեր մասնագիտությունների համար ձևաչափը տարբեր են: Հ. Միքայելյանը բացատրեց, որ գնահատվում են վերջարդյունքները, բացի նպատակից պետք է լինեն խնդիրներ: Գնահատումը պետք է լինի նաև ըստ խնդիրների: Գ. Դեմիրխանյանն ասաց, որ պետք է պատրաստ լինենք ըստ գործող ծրագրերի հավատագրմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- (Քվեարկության արդյունքում՝ միաձայն) Հաստատել:

ԼՄԵՑԻՆ.- Ընթացիկ հարցեր.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Գ. Դեմիրխանյանը ներկայացրեց, որ եկել է ասպիրանտուրայի հայտերի պատվեր տալու ժամանակը: Որևէ թուղթ չի ստորագրվի հայտերի համար մինչև թոյֆը չհանձնվի: Նա հորդորեց նաև ուշադիր լինել հոդվածների ցանկի հետ կապված:

Հայտարարության կարգով ասաց նաև, որ եկող տարի մեր բուհ ընդունված ուսանողները կստանան ամսական կրթաթոշակ (100000 դրամի կարգի) միջինացված միջին ծախսերից ելնելով և դա վերաբերվում է բնագիտական առարկաներին:Այժմ զոնդաժ ենք անում թե որ շրջանից ինչքան ուսանող ունենք:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-Ա. Գրիգորյանը ներկայացրեց մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում մագիստրոսական թեզերի ղեկավարների փոփոխության հետ կապված հետևյալ տվյալները: Քանի որ Անահիտ Ենոքյանը գնացել է արտասահման, իսկ Ալվարդ Խաչանյանը դուրս է մնացել, ապա նրանց ավարտական թեզերի ղեկավարությունը հանձնվել են համապատասխանաբար, ըստ ամբիոնի նիստի քննարկման հետևյալ դասախոսներին. Շողիկ Երանոսյանի թեզի ղեկավար նշանակել Արաքսյա Մկրտչյանին, Արմինե Գալստյանի թեզի ղեկավար նշանակել Գևորգ Բաղդասարյանին, Սոնա Ալավերդյանի թեզի ղեկավար նշանակել Գուրգեն Ասատրյանին, իսկ հեռակա մագիստրատուրայի երրորդ կուրսի ուսանողներ Մանուշ Սարիբեկյանի թեզի ղեկավար նշանակել Լուսինե Ղուլդազարյանին, Լիլիթ Դավթյանի թեզի ղեկավար նշանակել Համլետ Միքայելյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել:

ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի նիստի
նախագահ՝



Գ. Դեմիրխանյան

Խորհրդի նիստի քարտուղար՝

Ա.Հ. Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի
ֆակուլտետի խորհրդի 2022թ. նոեմբերի 30 –ին ժ. 14:30 –ին 302 լսարանում
տեղի ունեցած թիվ 2 նիստի:

Խորհրդի 27 անդամներից նիստին մասնակցում էին 18-ը:

Օրակարգ

1. Ֆակուլտետի 2021-2022 ուսումնական տարվա աշխատանքների հաշվետվության քննարկում ու հաստատում:

Ջեկ. Գ. Դեմիրխանյան

2. Հեռակա 3-րդ և առկա 2-րդ կուրսերի մագիստրոսների թեզերի կատարման ընթացքի մասին:

Ջեկ. Ա. Թադևոսյան

Է. Կոկանյան

Լ. Ղուլղազարյան

Ա. Սահրադյան

3. Ընթացիկ հարցեր

Քվորումը ապահովված էր, նիստը սկսվեց ժամանակին և հաստատվեց օրակարգը:

ԼՄԵՑԻՆ. – Ֆակուլտետի 2021-2022 ուսումնական տարվա աշխատանքների հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Գ. Դեմիրխանյանն ասաց, որ հաշվետվությունը նախօրոք տրվել է ամբիոններին, նրանք ուսումնասիրել են և նկատել են որոշ բացթողումներ և թերություններ: Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնները ներկայացրել են բացթողումները և դրանք ավելացվել են և ուղղվել, ֆիզիկայի և տեխնոլոգիայի ամբիոններն այսօր են ներկայացրել: Հիմնականում խոսքը գնում է հրատարակված աշխատանքներին, ի՞նչ հոդված է, որտեղ է տպվել և քանի էջ է: Թերություններ կային նաև պաշտպանված ատենախոսությունների վերաբերյալ աղյուսակում, սեմինարների հետ կապված: Ով ունի դիտողություններ, և ովքեր են նկատել թերություններ թող ասեն: Է. Կոկանյանը խոսեց ֆիզիկայի ամբիոնի գրանտների մասին և հավելեց, որ չի կարելի ուրիշ հիմնարկի գրանտի գումարի մասին հարցնել: Գ. Դեմիրխանյանը հավաստիացրեց, որ հաշվետվության մեջ խոսքը գնում է այն գրանտների մասին, որը մերն է: Ֆակուլտետի հաշվետվության մեջ ինչ հնարավոր է շտկվել է: Է. Կոկանյանը հետաքրքրվեց այն փաստով, եթե ինքը գրանտի ղեկավար է, իսկ այն ուրիշ ինստիտուտից և մեր համալսարանի հետ կապ չունի, դա պետք է գրվի թե՞ ոչ: Գ.

Գեմիթիսանյանն ասաց, որ եթե օգտագործվում է մանկավարժականի անունը, պետք է գրվի: Ն. Սաֆարյանն ավելացրեց, որ մեզ համար պատվաբեր է, որ դուք գրեք, դա պատվաբեր է նաև ԲՈւՀ-ի և ֆակուլտետի համար: Գ. Դեմիթիսանյանը ասաց, որ ինքը գտնում է, որ գրվի նման դեպքում, եթե ղեկավար է: Գ. Դեմիթիսանյանը խնդրեց, որ այսօրվա ընթացքում մեկ անգամ էլ նաև հաշվետվությունը:

Քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ.- (միաձայն) հաստատել ՄՖԻ ֆակուլտետի 2021-2022թ հաշվետվությունը:

ԼՄԵՑԻՆ. – Հեռակա 3-րդ և առկա 2-րդ կուրսերի մագիստրոսների թեզերի կատարման ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ա. Թադևոսյանը ներկայացրեց ինֆորմատիկայի ամբիոնի մագրստրոսների թեզերի վիճակը: Նա ասաց, որ հեռակա մագիստրատուրայի 4 ուսանողների աշխատանքները 90% -ով պատրաստ է, առկա մագիստրատուրա 2-ի չորսից մեկը իր դիմումի համաձայն դուրս է եկել, իսկ երեքը՝ պատրաստ են: Է. Կոկանյանը ներկայացրեց ֆիզիկա մասնագիտությամբ մագիստրատուրայի հեռակա և առկա ուսուցմամբ կուրսերում իրավիճակը նորմալ է, խնդիր կա վերականգնված ուսանողի հետ: Թեման տրված է հոկտեմբերի սկզբին և մինչև հիմա չի ներկայացել, անցած տարի ժամանակը կարճ էր, եկավ այս տարի, որկու տարի ընդմիջում է տվել: Գ. Դեմիթիսանյանն էլ ասաց, որ Սուսաննան լավ սկսեց, կորոնավիրուսը եկավ և ամեն ինչ խառնեց: Է. Կոկանյանը հավելեց, որ առաջին կուրսից մինչև հիմա երեք տարի է անցել: Գ Դեմիթիսանյանը առաջարկեց կապվել, իմանալ պատճառը: Ն. Սաֆարյանը գտավ, որ խնդիրը պետք է հիմա ասել, քանի որ այդ ուսանողը գումար է մուծում: Լ. Ղուլդազարյանը ներկայացրեց մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի առկա երկրորդ կուրսի և հեռակա երրորդ կուրսի մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը: Նա ասաց, որ առկա մագիստրատուրայի 13 ուսանողներից 12-ի թեզերի կատարման ընթացքը լավ է, միայն մեկ ուսանող պասիվ է, հետևում ենք և բնականաբար կհասցնի, երկու ուսանողի ղեկավար փոխվել են: Հեռակա մագիստրատուրայի 12 ուսանողներից 3-ը մի քիչ թույլ են, ղեկավարի հետ հետևում ենք նրանց և դեկտեմբերի ևս մեկ անգամ կկանչենք, հեռակա մագիստրատուրայի 2 ուսանողի ղեկավարներ ևս փոխվել են, բայց թեմաները ոչ: Ա. Սահրադյանն փաստեց, որ աշխատանքները 80-90%-ով պատրաստ են: Գ. Դեմիթիսանյանը հիշեցրեց, որ գրախոսությունը պետք է լինի արտաքին: Է. Կոկանյանն առաջարկեց ունենալ էքսպերտների բազա: Գ. Դեմիթիսանյանն ասաց, որ մոտ օրերս շրջաբերականով կտեղեկացվի: Նա ասաց նաև, որ պրոբլեմ կա ուսումնական վարձերի

հետ կապված, ամենախնդրահարույցն մաթեմատիկա մասնագրիտության հետ է (1180000 դրամ), ֆիզիկան՝ կես միլիոն: Բոլոր ուսանողներին տեղեկացրել են: Ուսանողները դրա պատճառով ընկնում են ադմինիստրատիվ ճնշման տակ: Խոսքը երկուսու կես միլիոն պարտքի մասին է հեռակա մագիստրատուրայի երկրորդ կուրսում: Ն. Օրոյանն առաջարկեց դեկտեմբերին այդ ուսանողներին քննության չթողնել: Գ. Դեմիրխանյանն ասաց, որ ամենատեսակով դա է, մենք առաջարկել էինք նաև վճարել ամսական, բայց հակասությունն ավելի խորն են: Վ. Վարդազարյանը փաստեց, որ եթե օրենքը կա, ապա այն պետք է աշխատի: Գ. Դեմիրխանյանը խնդրեց ով հանդիպի այդ ուսանողների հետ, ապա տեղեկացնեն իրավիճակի մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն

ԼՄԵՑԻՆ. – Ընթացիկ հարցեր.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- 1). Հայտարարության կարգով ասվեց, որ չորրորդ կուրսի ուսանողուհի Ղարիբյան Մարիամը ընտրվել է, որպես համալսարանի լավագույն ուսանողուհի: 2) Տեղեկություն տրվեց այն մասին, որ երրորդ կուրսի ուսանողուհի Մկրտչյան Լուսինեն ավտովթարի է ենթարկվել և այժմ հիվանդանոցում է, վնասված է թոքը, քույրը օգնություն է խնդրել, ուսանողների շրջանում դրամահավաք է արվել: Փորձենք օգնել: 3). Լուսինե Ղուլդազարյանը ասաց, որ թեմատիկ տրոհումների և առարկայական նկարագրերի թարմացում է գնում, գուցե հաջորդ նիստով դրանք հաստատենք: Գ. Դեմիրխանյանը հայտարարեց, որ 12.12.22թ. ժամը 14:00-ին ռեկտորատի դահլիճում հանդիպում է լինելու ռեկտորի հետ, պարզենք են տալու, կլինեն ելույթներ և պետք է ֆակուլտետի միջոցներով ֆուրջետ կազմակերպվի: 4). Ներկայացնել դպրոցներ հաճախելու գրաֆիկ: 4-րդ կուրսի ուսանողները անվճար պարապմունքներ են անում մեր ֆակուլտետ ընդունվել ցանկացող դպրոցականների հետ, այդ մենք կհամարենք կամավորական աշխատանք և ուսանողները կստանան կրեդիտներ

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն

ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի նիստի

նախագահ՝



Գ.Գ. Դեմիրխանյան

Խորհրդի նիստի քարտուղար՝

Ա.Հ. Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի

ֆակուլտետի խորհրդի 2022թ. դեկտեմբերի 26 –ին ժ. 14:30 –ին 302 լսարանում

տեղի ունեցած թիվ 3 նիստի:

Խորհրդի 27 անդամներից նիստին մասնակցում էին 19-ը:

Օրակարգ

1. Հեռակա 3-րդ կուրսի մագիստրոսական թեզերի պաշտպանության կազմակերպման մասին:

Զեկ. Գ. Դեմիրխանյան

2. Մանկավարժական պրակտիկայի ընթացքի ու արդյունքների մասին:

Զեկ. Ն. Բաբաջանյան

Գ. Էլոյան

Ա. Մկրտչյան

Բ. Խողերյան

3. Ընթացիկ հարցեր

Քվորումը ապահովված էր, նիստը սկսվեց ժամանակին և հաստատվեց օրակարգը:

ԼՄԵՑԻՆ. – Հեռակա 3-րդ կուրսի մագիստրոսական թեզերի պաշտպանության կազմակերպման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Գ. Դեմիրխանյանը նշեց, որ հեռակա մագիստրոսների թեզերի պաշտպանությունը նախատեսվում է հունվարի վերջին 26-ից հետո, որպեսզի օրերը լինեն այնպես, որ չխախտվի նախապաշտպանության և պաշտպանության միջև ժամկետները: Հանձնաժողովները ընտրված են: Նա ասաց նաև, որ հանձնաժողովի անդամների քանակը ներքին և արտաքին անդամների քանակով պետք է լինեն 50-50: Հանձնաժողովի մեջ կլինեն մեկ ներկայացուցիչ ռեկտորատից, մեկը՝ դեկանատից, մեկը ամբիոնի վարիչը և մեկը՝ մեթոդիստ, իսկ դրսից մեկ նախագահ, իսկ մնացածը դպրոցի հետ առնչություն ունեցող անձիք: 50-50-ը նախարարության որոշումն է, մնացածը՝ մեր: Հանձնաժողովները կազմված են այդ պայմաններին համապատասխան: Ռեկտորատից հավանաբար կլինի Սաֆարյան Նառան:

Ֆիզիկայի հանձնաժողովի կազմն այսպիսին է՝ Ալավերդյան Ռոմանը հանձնաժողովի նախագահ, ֆ.մ.գ.դ., ԵՊՀ օպտիկայի ամբիոնի վարիչ, Հարությունյան Իշխան՝ քվանտ վարժարան, օպտիկայի ամբիոնից և մի ուսուցիչ Շիրակացու Ճեմարանից:

Մաթեմատիկայի հանձնաժողովում դրսից կլինեն. Աթաբեկյան Վարուժանը ԵՊՀ հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի վարիչ, Փիլիպոսյան Տիգրանը՝ նույն ամբիոնից, Ղազարյան Սիլվան՝ Կարեն Դեմիրջյանի անվան թիվ 139 ավագ դպրոցի փոխտնօրեն, Հովհաննիսյան Զոհրաբը՝ ֆ.գ.թ., թվային անալիզի և մաթ մոդելավորման ամբիոնի դոցենտ, ներսից Ղուլազարյան Լուսինեն՝ մաթեմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, Մկրտչյան Արաքսյան որպես մեթոդիստ:

Ինֆորմատիկայի հանձնաժողովում ընդգրկված են 1). Ասատրյան Հրաչյա Վոլոդյայի Ինֆորմատիկայի պրոբլեմների ինստիտուտի ընօրեն, 2). Հովհաննիսյան Ծաղիկ- պոլիտեխնիկական համալսարանից, 3). Ծատուրյան Արմեն՝ բնագիտական առարկաների հատուկ խորացմամբ դպրոցի տնօրեն, 4). Յուլյան Ռոբերտ - հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան, մեր համալսարանից 5). Թադևոսյան Արտուրը-ինֆորմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, 6). Գրիգորյան Նանա- մեթոդիստ:

Գ. Դեմիրխանյանը ցավով ասաց, որ հեռակա մագիստրատուրայում ունենք ուսանողներ ովքեր ունեն ֆինանսական պարտքեր Դանիելյան Սիրանուխտը (հմ3 մաթեմատիկա) և Ստեփանյան Անին(ինֆորմատկա), վերջինս ունի նաև առարկայական պարտք և մի ամբողջ կիսամյակ չի վճարել: Բացի այս ամենից ունենք մեկ դիմում Հակոբյան Սուսաննայից, ով Գերմանիայում է և ուզում էր որ նախապաշտպանությունը և պաշտպանությունը լինի հեռավար: Նա այստեղ չէր և չի ներկայացել նախապաշտպանությամբ: Լ. Ղուլազարյանն ասաց, որ եթե Սուսաննա հունվարի 3-ին գա, կարող ենք կազմակերպել նախապաշտպանությունը: Եթե չհասցնի մայիսին առկայի հետ պաշտպանի: Գ. Դեմիրխանյանը բացատրեց, որ դիմումին պետք է պատասխանի:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունելի գիտություն

ԼՍԵՑԻՆ. – Մանկավարժական պրակտիկայի ընթացքի ու արդյունքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՑՎԵՑԻՆ.- Է. Կոկանյանն ասաց, որ ֆիզիկայի առկա բակալավր երկրորդ կուրսի շարունակական պրակտիկան՝ մեթոդիստ Սաֆարյան, նորմալ է ընթացել, ֆիզիկայի առկա բակալավր երրորդ կուրսի մանկավարժական պրակտիկան՝ մեթոդիստ Դանիելյան, նույնպես նորմալ է ընթացել, հեռակա բակալավր չորրորդ և հիգերորդ կուրսերի պրակտիկան՝ մեթոդիստ Ռուբինյան, նորմալ է, միայն մի տղա չի հաճախել, միշտ խոստացել է և ոչ մի անգամ չի եկել: Կմնա մյուս տարի փետրվարին: Բ. Խոդերյանը ներկայացրեց տեխնոլոգների կատարած պրակտիկայի վիճակը. առկա բակալավր 2 և 3 կուրսերի շարունակական պրակտիկաները նորմալ անցան,

հբ 5՝ 194 դպրոցում էր, ղեկավարներ Սահրադյան և Այվազյան, ամեն ինչ նորմալ էր, միայն Վարդանյան Մանեն հանրապետությունում չէր և իրեն թույլ են տվել անհատականով կազմակերպել հեռակա երրորդ կուրսի հետ՝ փետրվարին: Շրջաբերականով պրակտիկան մի ամիս ուշացավ: Արաքսյա Մկրտչյանը ներկայացրեց մաթեմատիկաների պրակտիկան: Նա ասաց, որ առկա բակալավր

Երրորդը երկու խումբ էր, առկա բակալավր չորրորդը վեց խումբ և շատ ակտիվ պրակտիկա են անցկացրել, տարրատեսակ միջոցառումներով հագեցած, իսկ հեռակա բակալավր IV և V կուրսերում մեծ մասն ունեցել են անհատական պրակտիկա իրենց դպրոցներում և համապատասխան փաստաթղթերը ներկայացված են: Էլոյանն էլ ներկայացրեց ինֆորմատիկների անցկացրած պրակտիկան, որն անցել է նորմալ, միայն մի ուսանողուհի՝ Բենյան Հասմիկը, ով երեխա է ունեցել և նա հունվարին պետք է գնա երկրորդ հերթով դպրոց պրակտիկա անցնելու, իսկ հեռակայում մի տղա էլ հեռացված էր, բայց անունը ընդգրկված էր ցուցակում:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն:

ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի նիստի

նախագահ՝



Գ.Գ. Դեմիրխանյան

Խորհրդի նիստի քարտուղար՝

Ա.Հ. Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Սաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի
ֆակուլտետի խորհրդի 2023 թ. Փետրվարի 9 -ի՝ հարցման կարգով կայացած նիստի

Լսեցին. ՀՊՄՀ Գիտական խորհրդի կազմում ֆակուլտետի աշխատակիցների
ընդգրկման հարցը:

Որոշեցին. առաջարկել Էդվարդ Կոկանյանի, Համլետ Միքայելյանի և Արտակ
Սահրադյանի թեկնածությունները ՀՊՄՀ գիտական խորհրդի կազմում
ընդգրկվելու համար:

ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի նիստի նախագահ՝



Գ. Գ. Դեմիրխանյան

Խորհրդի նիստի քարտուղար՝

Ա. Հ. Գրիգորյան



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի
ֆակուլտետի խորհրդի 2023թ. մարտի 2 –ին ժ. 14:30 –ին 302 լսարանում

տեղի ունեցած թիվ 5 նիստի:

Խորհրդի 27 անդամներից նիստին մասնակցում էին 19-ը:

Օրակարգ

1. Հեռակա մագիստրատուրայի պետական որակավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների քննարկում:

Ջեյ. Գ. Դեմիրխանյան

2. Առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:

Ջեյ. Ն. Օրդյան

3. 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման կրթական ծրագրի մասնակիցների հետազոտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:

Ջեյ. Ա. Թադևոսյան

Է. Կոկանյան

Լ. Ղուլդազարյան

Ա. Սահրադյան

4. Ընթացիկ հարցեր: Ասատրյան Ս. Մ., Նադարյան Ա. Գ., «Ժամանակակից գործավար համակարգերի աշխատանքի կազմակերպում» ուսումնական և լաբորատոր առաջադրանքների կազմակերպման մեթոդական ուղեցույցի տպագրման երաշխավորելու հարցը:

Քվորումը ապահովված էր, նիստը սկսվեց ժամանակին և հաստատվեց օրակարգը:

ԼՍԵՑԻՆ. – Պետական որակավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.– Գ. Դեմիրխանյանը նշեց, որ հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները ընդունել ենք հարցման կարգով ադմինիստրատիվ նպատակով, հիմա չենք հաստատում, այլ քննարկում ենք: Նա ասաց նաև, որ հեռակա մագիստրատուրայի պաշտպանությունների արդյունքներն է որը պետք է հաշվի առնենք առկայի պաշտպանության ժամանակ: Ֆիզիկայի հանձնաժողովի նախագահը՝ Ալավերդյան Ռոմանը, իր հաշվետվության մեջ նշել է մագիստրոսների ուժեղ կողմերը. բոլոր ուսանողները պատրաստել էին զեկուցման ցուցադրություն, աշխատանքները համապատասխանում էին

մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջներին, ղեկավարների կողմից առաջարկված թեմաները արդիական էին և աշխատանքները պարունակում էին փորձարարական մաս: Թույլ կողմերը. ցուցադրություններում տեքստային մասի ծավալը մեծությունը, բացակայում էին փորձարարական մասի մանրամասն նկարագրությունները, եզրակացությունները երբեմն հստակ ձևակերպված չէին և ուսանողների խոսքը ներկայացման ժամանակ կաղում էր՝ նկատելի էր փորձառության պակասը: Հնարավորությունները. թեզերի թեմաները մոտեցնել ֆիզիկայի դպրոցական դասընթացին՝ ուշադրություն դարձնելով մեթոդական հարցերին, ավելի շատ ուշադրություն դարձնել թեզերի ներկայացման բովանդակային մասին: Սպառնալիքները. որոշ ուսանողների մոտ թերի է բազային կրթությունը, կատարված հետազոտությունների հետագա շարունակության հեռանկարի բացակայությունը: Է. Կոկանյանը ասաց, որ Ալավերդյան Ռոմանը մեծ փորձ ունի և կասկածի տակ առնել նրա կարծիքը ինքը չի կարող, երկու ուսանողով կարծիք կազմելը դժվար է, դա ընդհանրացման կարծիք էն չկա միկետ, որ ինքը համաձայն չլինի Ռ. Ալավերդյանի գրածների հետ: Գ. Դեմիրխանյանը հարցրեց կա մի բան, որ պետք է հաշվի առնել մայիսին: Է. Կոկանյանը առաջարկեց, որ առնվազն երկու տարի հնարավորություն տալ չփոխել նախագահներին: Գ. Դեմիրխանյանը պատասխանեց, որ նախկինում այդպես էր, երկու տարի կարող է չլինել, հետո լինել: Ա. Թադևոսյանը կատակեց, որ գուցե դա հակակոռուպցիոն քաղաքականության հետ է կապված: Գ. Դեմիրխանյանը խոստացավ այդ հարցը բարձրացնել: Լ. Արաբաջյանը ուզեց իմանալ, թե ով է ընտրում նախագահներին: Գ. Դեմիրխանյանը պատասխանեց, որ դա ղեկանի իրավասության տակ է, չնայած հիմնականում ընտրում են ամբիոնի վարիչները: Մաթեմատիկա մասնագիտության ատեստավորման հանձնաժողովի նախագահը՝ Վարուժան Աթաբեկյանը նշել է որպես ուժեղ կողմեր. բոլոր ուսանողները պատրաստել էին զեկուցման ցուցադրություն, զեկուցումների ցուցադրություններն ըստ էության էին, դրանց տևողությունը համապատասխանում էր հատկացված ժամանակին, աշխատանքները համապատասխանում էին մագիստրոսական թեզին ներկայացվող տեխնիկական պահանջներին, ղեկավարների կողմից առաջարկված թեմաները արդիական էին, թեմաներում արձարձվող խնդիրները թեզերի հեղինակները փորձարկել էին դպրոցներում: Թույլ կողմերը. Ուսանողները հիմնականում կարդում էին ցուցադրությունները, գրականության ցանկերում առկա էին արդիականությունը կորցրած հղումներ, գրեթե չկային հղումներ մեթոդա աղբյուրներին, հաճախ փորձարկումներն արվել էին փոքրաթիվ աշակերտներով դասարաններում, եզրակացությունները երբեմն միարժեքորեն չէին բխում կատարված փորձարկումներից: Նա կարծում է, որ կարելի էր հնարավորություն ստեղծել մաթեմատիկական բաղադրիչն ավելացնել ուսումնասիրվող թեմաներում, արձարձվող խնդիրները փորձարկել տարբեր դպրոցներում և սպառնալիքներ են հանդիսանում թեզերի պատրաստման ընթացքում միայն հնացած գրականությունից օգտվել հետընթաց է

ստեղծում և տեղեկատվության արդիական ռեսուրսների անտեսումը կարող է հանգեցնել ոչ ճիշտ եզրահանգումների: Մասնագետների պատրաստման գործընթացի որակի հետագա բարելավման ուղղությամբ նա կատարել եզրակացություն և առաջարկություն:

Գ. Դեմիրխանյանն առաջարկեց **Լ. Ղուլղազարյանին** մեկնաբանել: **Լ. Ղուլղազարյանը** ասաց, որ նշվել է այն ինչ-որ կար: Գրականության պահի հետ համաձայն է և կփորձեն արդիականացնել, մաթեմատիկայի բաղադրիչը յուրաքանչյուր թեզի մեջ ավելացվել է և դարձրել են կիրառական, իսկ տարբեր դպրոցներում փորձարկելու համար հնարավորություն չի եղել որովհետև նրանք սովորում են հեռակա և յուրաքանչյուր գյուղում կա մեկ դպրոց: Ինֆորմատիկա մասնագիտության նախագահը՝ Հրայր Ասատրյանը, տվել է ամփոփիչ ատեստավորման գործընթացի SWOT վերլուծություն՝ ուժեղ կողմեր. պատշաճ պատրաստվածություն, իրական խնդիրների ճարտարագիտական յուրովի լուծումներ, թույլ կողմեր. նույնաբովանդակ խնդիրների իրականացում, նոր տեխնոլոգիաների և գիտական նորությունների սահմանափակ ուսումնասիրում, հնարավորությունները. կարևոր ծառայությունների մշակում կրթական զանազան ոլորտներում, գիտակարգային հետազոտությունների իրականացում, սպառնալիքներից առանձնացրել է միայ համավարակը: **Հ. Ասատրյանի** եզրակացությունը և առաջարկությունն այն է, որ թեմաների առաջադրման ժամանակ ընդգրկել լուծվող խնդիրների առավել մեծ շրջանակ և դրանցում մեծ տեղ տալ տեխնոլոգիական և գիտական նորագույն նվաճումներին:**Ա. Թադևոսյանը** մեկնաբանեց այսպես, որ նախագահներին ծանոթացնել SWOT վերլուծության հետ և այն որ բոլոր վանդակները չէ որ պետք է լրացնել: **Վ. Վարդազարյանն** ավելացրեց, որ իրեն թվում է, որ նախագահները տանջվում են այդ ամենը լրացնելիս: **Է. Կոկանյանը** հավաստեց, որ եթե ամեն ինչ գրված լինի ճշգրտորեն, ապա դա կլինի մեզ համար օգտակար: **Գ. Դեմիրխանյանը** հիշեցրեց, որ առկա մագիստրատուրայի թեզերը պետք է արտաքին գրախոսության ուղարկել, որը չի վճարվելու: **Է. Կոկանյանն** ասաց, որ եթե այդպես է, ապա կուղարկի իր ընկերներին, իսկ դրա համար նախարարությունը պետք է բազա ստեղծի, ովքեր պատրաստ են դա անելու: **Լ. Արաբաջյանը** հարցրեց թե ինչպես մագիստրոսական թեզը ուղարկենք անվճար գրախոսության, եթե նրանց ում ուզում են ուղարկել նույն աշխատանքի համար վճարում են: **Է. Կոկանյանն** էլ ամրագրեց, որ դա պետք է լինի պաշտոնական մակարդակով:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն:

ԼՄԵՑԻՆ. – Առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ն. Օրոյանը հակիճ և բովանդակալից ներկայացրեց առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները: Նա ասաց, որ դուրս են մնում ինֆորմատիկա մասնագիտությունից առաջին կուրս մագիստրատու Պետրոսյան Սուրենը: Տեխնոլոգիա մասնագիտությունից առկա բակալավրի երկրորդ կուրսի ուսանողուհի Մերի Մկրտչյանը, ժամանակ չի գտել գա դիմում գրել, փոշմանել է, որ դուրս է մնացել: Մնացածը նորմալ են: Մաթեմատիկա մասնագիտության երկրորդ կուրսի մագիստրոս Անահիտ Ղազարյանը

վտանգի տակ է: Գ. Դեմիրխանյանը բացատրեց, որ դիմում չգրելով ընկնում են կրկնակի ֆինանսական ծախսի տակ:

ՈՐՈՇԵՑԻՒՆ.- Ընդունել ի գիտություն:

ԼՄԵՑԻՒՆ. – 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման կրթական ծրագրի մասնակիցների հետազոտական աշխատանքների թեմաների քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՒՆ.- Նորմալ է: Թեմաները քննարկված են ամբիոնի նիստերում և հաստատված են: Գ. Դեմիրխանյանը նշեց, որ այս վերապատրաստումը իրավունք է տալիս մասնակցելու այլ ատեստացիաների և վերապատրաստումների: Ա. Թադևոսյանը ասաց, որ վերապատրաստում անում են տարբեր կազմակերպություններ, դրա համար պարտադիր չէ, որ այդ ամենը քննարկել ամբիոնի նիստին: Է. Կոկանյանը գտավ, որ էթե նա տեսնում է մեր ԲՈՒՀ-ի անվան տակ գնում է աշխատանք, որը մակարդակ չունի, ապա ինքը վրդովում է և այն ինչ անցնում է ամբիոնով ինքը պատասխան է տալիս դրա համար, իսկ ինչը, որ չի անցնում ամբիոնով, ապա ինքը պատասխանատու չէ:

ՈՐՈՇԵՑԻՒՆ.-(Քվեարկության արդյունքում՝ միաձայն) Հաստատել:

Ընթացիկ հարցեր .

ԼՄԵՑԻՒՆ. – Ս. Մ. Ասատրյանի, Ա. Գ. Նադարյանի, «Ժամանակակից գործավար համակարգերի աշխատանքի կազմակերպում» ուսումնական և լաբորատոր առաջադրանքների կազմակերպման մեթոդական ուղեցույցի տպագրման երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՒՆ.- Ա. Գրիգորյանը ներկայացրեց մեթոդական ուղեցույցի գրախոսությունները: Դրական արտահայտվեցին Ա. Թադևոսյանը, Գ. Էլոյանը և ուրիշներ:

ՈՐՈՇԵՑԻՒՆ.-(միաձայն քվեարկության արդյունքում)՝ Ս. Մ. Ասատրյանի, Ա. Գ. Նադարյանի, «Ժամանակակից գործավար համակարգերի աշխատանքի կազմակերպում» ուսումնական և լաբորատոր առաջադրանքների կազմակերպման մեթոդական ուղեցույցը երաշխավորել տպագրության:

ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի նիստի

նախագահ՝

Խորհրդի նիստի քարտուղար՝



Գ.Գ. Դեմիրխանյան

Ա.Հ. Գրիգորյան

Խ.Արուսյանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի

ֆակուլտետի խորհրդի 2023թ. փետրվարի 10 -ին հարցման կարգով կայացած թիվ 5 նիստի:

Օրակարգ

Հեռակա մագիստրատուրայի պետական քննությունների նախագահների հաշվետվությունների քննարկում:

ԼՄԵՑԻՆ: Հեռակա մագիստրատուրայի պետական քննությունների նախագահների հաշվետվությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ: Ընդունել ի զիտություն:

ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի նիստի

նախագահ՝

Խորհրդի նիստի քարտուղար՝



Գ.Գ. Նեմիրխանյան

Ա.Հ. Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի
ֆակուլտետի խորհրդի 2023թ. մայիսի 10 –ին ժ. 14:30 –ին 302 լսարանում
տեղի ունեցած թիվ 6 նիստի:

Խորհրդի 27 անդամներից նիստին մասնակցում էին 19-ը:

Օրակարգ

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների կազմակերպման մասին:

Ջեյ. Գ. Դեմիրխանյան

2. Մագիստրանտների ատեստավորման և բակալավրի ավարտական կուրսերի ուսանողների ավարտական աշխատանքների մասին:

Ջեյ. Ն. Օրոյան

Ա. Թադևոսյան

Է. Կոկանյան

Լ. Ղուլդազարյան

Ա. Սահրադյան

3. Ընթացիկ հարցեր: ա) Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Հասմիկ Ալեքսանյանի ատենախոսության թեման՝ «Բանաձևերի ուսուցման հիմնախնդիրը մաթեմատիկայի դասավանդման գործընթացում» (ԺԳ.00.02 Դասավանդման և ուսուցման մեթոդիկա մասնագիտությամբ) վերնագրով հաստատելու և ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Համլետ Միքայելյանին գիտական ղեկավար նշանակելու հարցը:

բ) ՄՏԻ ֆակուլտետի բակալավր 4-րդ կուրսի ուսանողներին կատարած կամավորական աշխատանքների համար համապատասխան միավորներ տալու հարցը:

Քվորումը ապահովված էր, նիստը սկսվեց ժամանակին և հաստատվեց օրակարգը:

ԼՄԵՑԻՆ. – Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների կազմակերպման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Գ. Դեմիրխանյանը ներկայացրեց այս տարվա ընդունելության դիմումների քանակը ըստ մասնագիտությունների: Նա ասաց, որ մագիստրատուրայի ընդունելությունը դեռ առջևում է և չգիտենք թե մեր բակալավրիատն ավարտած ուսանողներից քանիսը կգան: Ն. Սաֆարյանը նշեց, որ մագիստրատուրայի ուսանողներն էլ են ստանում թոշակ:Ա. Թադևոսյանը փաստեց, որինֆորմատիկայիբակալավրիատից 9 հոգի կգան մագիստրատուրա: Գ. Դեմիրխանյանն անհագստացած նշեց, որ գումարային առումով

այս տարի ավարտում են մոտ 150 հոգի, իսկ այսօրվա դրությամբ ունենք միայն 38 դիմորդ: Այնուհետև անցան առաջին հարցի քննարկմանը: Գ. Դեմիրխանյանը ասաց, որ ֆակուլտետի բոլոր ամբիոններին տրված են ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների կազմակերպման համար ժամանակացույցը, իսկ համապատասխան փաստաթղթերը պատրաստ են: Ա. Թադևոսյանը փաստեց, որ մեկ մագիստրոսատեստավորումների արդյունքում չի երաշխավորվել պաշտպանության, իսկ ըստ կարգի ասվում է, որ նման ուսանողը կարող է ներկայանալ պաշտպանության, բայց կա մի հարց, առանց գրախոսության նա կարո՞ղ է գալ պաշտպանության: Գ. Դեմիրխանյանը բացատրեց, որ նախապաշտպանությունը պարտադիր չեմ է, որը պետք է ուսանողը հաղթահարի: Ն. Սաֆարյանը փաստեց, որ պետք է հասկանալ թե ինչ պատճառով ուսանողը չի ներկայացել նախապաշտպանությանը: Ն. Բաղդասարյանը արտահայտվեց իր կարծիքը, որ նախապաշտպանությանը վերջնական գնահատական չի դրվում և այդ ուսանողը կարող է գալ պաշտպանության և փայլուն պաշտպանել: Ա. Թադևոսյանը բացատրեց, որ ավարտուն աշխատանք չի ներկայացրել և դրա համար չի երաշխավորվել: Լ. Ղուլղազարյանն էլ ավելացրեց, որ եթե նախապաշտպանությունից հետո տաս օրվա ընթացքում աշխատանքը վերջնական տեսքով ներկայացնի, ուրեմն նորմալ է: Գ. Դեմիրխանյանը պարզաբանեց, որ կարող է ավարտական աշխատանքը լավը լինի, կարծիքը և գրախոսությունը նույնպես, բայց պաշտպանությանը ստանա անբավարար, դրա համար նախապաշտպանությունները չանցածներին պետք չէ արգելք դնել: Նա հիշեցրեց, որ մագիստրոսական թեզերի գրախոսությունները պետք է լինեն դրսից: Ա. Սահրադյանն ասաց, որ տեխնոլոգիա մասնագիտությամբ մագիստրոսական թեզերի գրախոսությունները կան: Լ. Ղուլղազարյանն էլ ավելացրեց, որ մաթեմատիկա մասնագիտությամբ մագիստրոսական թեզերի գրախոսությունները եկել են և պրոբլեմ չկա: Ա. Սահրադյանն անկեղծորեն ասաց, որ իրեն թվում էր, որ գրախոսությունների համար վճարելու են, բայց հետո ստիպված էր զանգելու և տեղեկացնելու, որ չեն վճարվելու:

ՈՐՈՇԵՑԻՆ. - Ընդունել ի գիտություն

ԼՍԵՑԻՆ. – Մագիստրանտների ատեստավորման և բակալավրի ավարտական կուրսերի ուսանողների ավարտական աշխատանքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Ա. Թադևոսյանն ասաց, որ ինֆորմատիկայի բաժնի հեռակա բակալավրից մի հոգի չի մասնակցել ատեստացիաներին և նախապաշտպանությանը, երբ զանգեցին տեղեկանալու թե ինչն է պատճառը խոստացավ մինչև պաշտպանությունը հասցնել և մի հոգի էլ առկա մագիստրատուրայից: Մնացածի մոտ ամեն ինչ նորմալ է: Լ. Ղուլղազարյանը ներկայացրեց իրավիճակը մաթեմատիկա բաժնում: Նա ասաց, որ առկա բակալավրիատի բոլոր ուսանողներն անցել են ատեստավորումները և նախապաշտպանությունը, նույնը առկա մագիստրատուրայում է: Հեռակա բակալավրիատի նախապաշտպանությունը այսօր էր և բացահայտվեց, որ երկու աշխատանք դեռ մի քիչ կիսատ են, հուսով ենք կհասցնեն: Ն. Բաբաջանյանն ասաց, որ ֆիզիկայի բաժնում մեկ հոգի՝ վերականգնված ուսանող, ոչ եկել է, ոչ էլ աշխատել: Մնացածների մոտ ամեն ինչ նորմալ է,

մասնակցել և անցել են: Ա. Սահրադյանը ներկայացրեց իրադրությունը տեխնոլոգիայի բաժնում: Նա ասաց, որհեռակա բակալավրիատից երկու հոգու մոտ թերությունները մի քիչ շատ էին, մնացածի մոտ ամեն ինչ նորմալ է: Առկա բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների ավարտական աշխատանքները պատրաստ են:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն

Ընթացիկ հարցեր. ա)

ԼՍԵՑԻՆ. – Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Հասմիկ Ալեքսանյանի ատենախոսության թեման՝ «Բանաձևերի ուսուցման հիմնախնդիրը մաթեմատիկայի դասավանդման գործընթացում» (ԺԳ.00.02 Դասավանդման և ուսուցման մեթոդիկա մասնագիտությամբ) վերնագրով հաստատելու և ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Համլետ Միքայելյանին գիտական ղեկավար նշանակելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Հ. Միքայելյանը, Գ. Ղուլղազարյանը, Լ. Ղուլղազարյանը: Քննարկման արդյունքում.

ՈՐՈՇԵՑԻՆ.- Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Հասմիկ Ալեքսանյանի ատենախոսության թեման հաստատել «Բանաձևերի ուսուցումը որպես մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի հիմնախնդիր» (ԺԳ.00.02 Դասավանդման և ուսուցման մեթոդիկա մասնագիտությամբ) վերնագրով և գիտական ղեկավար նշանակել ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Համլետ Միքայելյանին:

ԼՍԵՑԻՆ. – ՄՖԻ ֆակուլտետի բակալավր 4-րդ կուրսի ուսանողներին կատարած կամավորական աշխատանքների համար համապատասխան միավորներ տալու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Գ. Դեմիրխանյանը ներկայացրեց, որ ՄՖԻ չորրորդ կուրսի որոշ ուսանողների լրացուցիչ միավորներ է տրվում նրանց կատարած մենթորական աշխատանքի համար: Նրանք կատարած աշխատանքների համար ներկայացնում են համապատասխան թղթեր որտեղ գրված է, թե քանի օր և քանի ժամ են աշխատել ու քառասուն ժամի դիմաց ստանում են հինգ միավոր: Գիտխորհրդի որոշմամբ հինգ միավորից ավել չեն ստանում: Այս տարի առաջին անգամ մաթեմատիկա բաժնի ուսանողներից ոմանք և ֆիզիկա բաժնի մեկ ուսանող նույնպես ամսից սկսած անվճար պարապմունքներ են արել այն դիմորդների հետ ովքեր ուզում էին ընդունվել ՀՊՄՀ: Փետրվարին այդ ուսանողներից ոմանք քննություն են հանձնել և բարեհաջող հաղթահարել են անցողիկի շեմը: Այդ ուսանողներից ոմանք նաև աշխատել են ճամբարներում: Երեք ուսանողի էլ ուսանողական խորհուրդն է հավաստագիր տվել, որի արդյունքում նրանք ստանում են 1,5 միավոր: Արտահայտվեցին նաև Լ. Ղուլղազարյանը, Ա. Թադևոսյանը: Ա. Գրիգորյանը կարդաց ուսանողների անունները, նրանց կատարած աշխատանքը և համապատասխան միավորները: Նրանք են՝

1. Աբաջյան Ջուլետտա Մամվելի - մաթեմատիկա IV կուրս – անվճար պարապմունքներ ՀՊՄՀ ընդունվել ցանկացող դիմորդների հետ- 5 միավոր

2. Միսակյան Մարջան Խաչատուրի - մաթեմատիկա IV կուրս - անվճար պարապմունքներ ՀՊՄՀ ընդունվել ցանկացող դիմորդների հետ- 5 միավոր
3. Հարությունյան Մարիամ Գրիշայի - ֆիզիկա IV կուրս - «հեքիաթային կիրճ» մանկական տուրիստական հանգստի կենտրոն – 20 օր - 200 ժամ – 5 միավոր
4. Մղդեայան Ամալյա Մամվելի - մաթեմատիկա IV կուրս - «հեքիաթային կիրճ» մանկական տուրիստական հանգստի կենտրոն – 20 օր - 200 ժամ – 5 միավոր
5. Կարապետյան Լիլիթ Հայկի - մաթեմատիկա IV կուրս - «Լուսաբաց» մանկական հանգստի ճամբար – 20 օր - 200 ժամ – 5 միավոր
6. Ադուլյան Թագուհի Արմենի - մաթեմատիկա IV կուրս - «Լուսաբաց» մանկական հանգստի ճամբար – 20 օր - 200 ժամ – 5 միավոր
7. Աբովյան Գայանե Նվերի - մաթեմատիկա IV կուրս - «Լուսաբաց» մանկական հանգստի ճամբար – 20 օր - 200 ժամ – 5 միավոր
8. Սահակյան Լիլիթ Սարմենի - մաթեմատիկա IV կուրս - «հեքիաթային կիրճ» մանկական տուրիստական հանգստի կենտրոն – 20 օր - 200 ժամ – 5 միավոր
9. Լազգյան Արևատ Արթուրի – Վրաստանի հանրային դպրոցում մաթեմատիկա է դասավանդել – 150 ժամ – 4 միավոր
10. Շահնազարյան Մարգարիտա Գրիգորի - մաթեմատիկա IV կուրս - «հեքիաթային կիրճ» մանկական տուրիստական հանգստի կենտրոն – 20 օր - 200 ժամ – 5 միավոր
11. Գևորգյան Նելլի Անդրանիկի - մաթեմատիկա IV կուրս - «հեքիաթային կիրճ» մանկական տուրիստական հանգստի կենտրոն – 20 օր - 200 ժամ – 5 միավոր
12. Խաչատրյան Նազելի Օգանեսի- մաթեմատիկա IV կուրս - «Լուսաբաց» մանկական հանգստի ճամբար – 20 օր - 200 ժամ – 5 միավոր
13. Հովիկյան Վարսենիկ Սուրիկի - մաթեմատիկա IV կուրս - «հեքիաթային կիրճ» մանկական տուրիստական հանգստի կենտրոն – 20 օր - 200 ժամ – 5 միավոր
14. Գյուրջյան Ջուլիետա Մայիսի - մաթեմատիկա IV կուրս - հավաստագիր – 1,5 միավոր
15. Ղարիբյան Մարիամ Արտակի - մաթեմատիկա IV կուրս - հավաստագիր – 1,5 միավոր
16. Բայան Հովհաննես Գագիկի – ինֆորմատիկա IV կուրս - հավաստագիր – 1,5 միավոր

ՈՐՈՇԵՑԻՆ.- ՄՖԻ ֆակուլտետի բակալավր 4-րդ կուրսի հետևյալ ուսանողներին տալ համապատասխան միավորներն իրենց կատարած կամավորական աշխատանքների համար:

ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի նիստի նախագահ՝



Գ. Դեմիրխանյան

Խորհրդի նիստի քարտուղար՝

Ա.Հ. Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի
ֆակուլտետի խորհրդի 2023թ. մայիսի 26 –ին ժ. 12:30 –ին 302 լսարանում
տեղի ունեցած թիվ 7 նիստի:

Խորհրդի 27 անդամներից նիստին մասնակցում էին 16-ը:

Օրակարգ

1. Ֆակուլտետի կանոնադրության մեջ լրացումների և փոփոխությունների մասին:

Ձեկ. Գ. Դեմիրխանյան

2. Ընթացիկ հարցեր:

Քվորումը ապահովված էր, նիստը սկսվեց ժամանակին և հաստատվեց օրակարգը:

ԼՍԵՑԻՆ. – Ֆակուլտետի կանոնադրության մեջ լրացումների և փոփոխությունների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Գ. Դեմիրխանյանն ասաց, համալսարանը ՊՈԱԿ էր դառավ հիմնադրամ և այդ պատճառով ամբողջ համալսարանի կտրվացքով համապատասխան փոփոխություններ չեն եղել և բացի դրանից՝ ֆակուլտետում էլ բազմաթիվ կառուցվածքային փոփոխություններ են եղել, որը արձանագրված չէր ֆակուլտետի խորհրդի կանոնադրության մեջ: Օրինակ՝ առաջ ֆակուլտետում կար մի մասնագիտություն, որը կոչվում էր գծագրություն և այդ մասնագիտությունը 5-6 տարի է չկա: Ֆակուլտետի նոր կանոնադրության նախագիծը էլեկտրոնային փոստով ուղարկվել էր ֆակուլտետի խորհրդի անդամներին: Ֆակուլտետի նոր կանոնադրության մեջ բացի կառուցվածքայինից մնացածը մնացել է նույնը:

Վ. Վարդազարյանն ասաց, որ մանրամասն կարդացել է և ամեն ինչ լավ է: Ա. Թադևոսյանն էլ հավելեց, որ այս անգամ իսկապես լավ է գրված: Գ. Ղուլազարյանի դիտարկմամբ կանոնադրության մեջ գրված «դեկանի առաջարկով կամ ֆակուլտետի խորհրդի որոշմամբ» արտահայտության մեջ «կամ»-ի փոխարեն ցանկալի է գրել «և»: Գ. Դեմիրխանյանը նշեց նաև, որ ավելացրել է միայն այն, որ ֆակուլտետը հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանում է: Ա. Թադևոսյանն ասաց, որ մի քանի տառասխալ է նկատել և

առաջարկեց ուղղել:

ՈՐՈՇԵՑԻՆ.- (Քվեարկության արդյունքում- միաձայն) Հաստատել նոր կանոնադրությունը փոփոխություններով հանդերձ:

Ընթացիկ հարցեր.

ԼՍԵՑԻՆ. – Ավարտական աշխատանքների կատարման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Գ. Դեմիրխանյանն ասաց, որ գրախոսությունների մեջ դիտողություններ չկան, այլ միայն նկարագրվում է թե ինչ է արված: Դիտողություններ պետք է լինեն և պաշտպանողին պետք է հնարավորություն տրվի, որ պատասխանի դիտողությունների . կամ համաձայն է կամ էլ պարզաբանի: Առանց դիտողությունների գրախոսությունը դառնում է ֆորմալ: Է. Կոկանյանն ասաց, որ կարգում գրված չէ և գրախոսության ձևում 10-12 տող է, այդքանի մեջ ի՞նչ կարող է գրվի: Հազիվ գրենք ուժեղ կողմերը և մի քանի տող էլ կգրենք, որ չնայած այս ամենին արժանի է համապատասխան գնահատականի: Գ. Դեմիրխանյանը հիշեցրեց, որ պաշտպանության ժամանակ նաև հարցեր են տալիս, օրինակ ինչու այսպես չե՞ս արել, կամ Ասատրյան Սամվելը պաշտպանություններից մեկի ժամանակ դիտողություն արեց, որ խնդիրներն ու նպատակները իրար չեն բռնում, հիմա հարց՝ գրախոսողը կարդացե՞լ էր դա, իրականում Սամվելը ճիշտ էր: Լ. Ղուլազարյանն ասաց, որ երբեմն ղեկավարի կարծիքը լինում է հինգը տող, ասենք չենք ընդունում: Է. Կոկանյանը պարզաբանեց, որ ղեկավարի կարծիքը վերաբերվում է ինչպես է աշխատել հետազոտողը: Ա. Թադևոսյանը հաստատեց, որ հստակ գրված է, որ ղեկավարի կարծիքը պետք է վերաբերվի ուսանողին: Լ. Արաբաջյանն առաջարկեց, որ ղեկավարը կարծիքում հիմնավորի թե հատկապես ինչու է այդ թեման ընտրված: Լ. Ղուլազարյանն ասաց, որ 2016 թ-ից կա հատուկ կարծիքի և գրախոսության բլանկ, որը չի գործածվում:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հետագայում մանրամասն անդրադառնալ ավարտական աշխատանքներին:

ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի նիստի
նախագահ՝



Գ.Գ. Դեմիրխանյան

Խորհրդի նիստի քարտուղար՝

Ա.Հ. Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի
ֆակուլտետի խորհրդի 2023թ. հունիսի 26 –ին ժ. 13:00 –ին 302 լսարանում
տեղի ունեցած թիվ 8 նիստի:
Խորհրդի 27 անդամներից նիստին մասնակցում էին 17-ը:

Օրակարգ

1. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների քննարկում:
Զեկ. Գ. Դեմիրխանյան
2. Ընթացիկ հարցեր: ա) Ֆակուլտետի ներկայացման հարցը համալսարանի կայք էջում:
բ) Տեխնոլոգիա ամբիոնի հայցորդ Դավիթ Պետրոսյանի ատենախոսության թեմայի վերնագրի և ղեկավարի հաստատման հարցը:
գ) Ձուգակցված մասնագիտությունների պլանների քննարկման հարցը:

Քվորումը ապահովված էր, նիստը սկսվեց ժամանակին և հաստատվեց օրակարգը:

Խորհրդի անդամները շնորհավորեցին Հ. Միքայելյանին ծննդյան օրվա առթիվ: Հ. Միքայելյանն ասաց, որ խորհրդի նիստի հայտարարությունը ստանալով նամակ է գրել օրակարգի մեջ նոր հարց մտցնելու կապակցությամբ և պատասխան չի ստացել: Ա. Գրիգորյանը փաստեց, որ նամակ չի ստացվել հետևաբար օրակարգում փոփոխություն չի եղել: Հ. Միքայելյանը առաջարկեց քննարկել նախարարի հրամանով շրջանառության մեջ մտած ուսուցչի մասնագիտական չափանիշներին, ֆակուլտետի անելիքները ուսուցչի մասնագիտական չափանիշները ձևավորելու ուղղությամբ: Գ. Դեմիրխանյանն ասաց, որ եթե շուտ լիներ այդ նամակը կուղարկեինք ֆակուլտետի խորհրդի բոլոր անդամներին, որ ծանոթանան: Մինչև արձակուրդները մենք մի անգամ ևս պետք է անենք խորհրդի նիստ և այդ հարցը մենք կընդգրկենք: Հիմա նիստի օրակարգում մեկ հարց է և այս նիստին հրավիրել ենք Ս. Ասատրյանին, որովհետև նա ասելիքներ ուներ, բայց պարզվեց, որ նա այսօր զբաղված է ներքին ընդունելության քննություններով և երբ վերջանա անպայման ընթացքում կգա:

ԼՄԵՑԻՆ. – Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.– Գ. Դեմիրխանյանն ասաց, որ բոլոր ամբիոններն ունեն հաշվետվությունները և ծանոթ են դրանց բովանդակությանը: Հաշվետվություններում որոշակի կարգով գրված է SWOT վերլուծություն և ազատ ոճով առաջարկություններ և դիտողություններ:

Գ. Դեմիրխանյանը առաջարկեց Ա. Գրիգորյանին ներկայացնել ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները կարդալով կարևոր հատվածները ըստ մասնագիտությունների: Սկսեցին քննարկումը տեխնոլոգիա և ձեռնարկչություն մասնագիտական ծրագրից: Ա. Գրիգորյանը ներկայացրեց, որ հեռակա բակալավրիատի, մասնագիտական մանկավարժություն՝ տեխնոլոգիա և ձեռնարկչություն մասնագիտական ծրագրի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվության մեջ առկա է ամփոփիչ ատեստավորմանը մասնակցած շրջանավարտների քանակը՝ 19, և ցուցաբերած արդյունքները, ամփոփիչ ատեստավորման գործընթացի SWOT վերլուծություն՝ Ուժեղ կողմեր.

Ուսանողները ընդհանուր առմամբ տրապետում էին ավարտական աշխատանքում

ներկայացված տեխնոլոգիաներին, այնպես էլ դպրոցում դրանց դասավանդման մեթոդիկաներին: Թեմաներն արդիական էին և հեռանկարային: Ուժեղ կողմերից էր նաև առանձին ուսանողների փորձը դասավանդման մեթոդիկայի մասով:

Թույլ կողմեր. Ցանկալի է ավարտական աշխատանքների թեմաներն ընտրելիս հաշվի առնել երկրում

տնտեսության գերակա ուղղությունները՝ նպատակ ունենալով ուսանողներին ծանոթացնելու առկա վիճակին և այն փոխանցել դպրոց: Գրախոսի կողմից նշված դիտողությունները պետք է լինեն ավելի հստակ:

Հնարավորություններ. Անհրաժեշտ է ընդարձակել տեխնոլոգիա և ձեռնարկչություն մասնագիտության հնարավորությունները՝ հաշվի առնելով միջին մասնագիտական և արհեստագործական կրթության մասնագիտությունների ցանկը և դեպի այդ մասնագիտությունները երիտասարդության կողմից աճող հետաքրքրությունը:

Սպառնալիքներ. Տվյալ մասնագիտության ոլորտում ուսանողության ոչ բավարար քանակը և հետագա նվազման միտումը:

Եզրակացություն և առաջարկություն մասնագետների պատրաստման գործընթացի որակի հետագա բարելավման ուղղությամբ՝ ամփոփիչ ատեստավորումը անցել է համաձայն գործող կանոնակարգի, կազմակերպված և ժամանակին: Ատեստավորման ժամանակ հանձնաժողովը ցուցաբերել է օբյեկտիվություն, գնահատականների վերաբերյալ տարաձայնություններ չեն եղել: Հանձնաժողովը գտնում է, որ ամբիոնի դասախոսախսական անձնակազմը լավ էր կազմակերպել խորհրդատվությունը, որն իր դրական ազդեցությունն է ունեցել ատեստավորման վրա: Որպես առաջարկ ցանկալի կլիներ ընդարձակել ամփոփիչ ատեստավորման աշխատանքների թեմաները, հաշվի առնելով երկրի տնտեսության զարգացման հեռանկարները:

Համարյա նույնն է գրված առկա բակալավրիատի (3) մասնագիտական մանկավարժություն՝ տեխնոլոգիա և ձեռնարկչություն մասնագիտական ծրագրի և առկա մագիստրատուրայի (3) ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունների մեջ:

Ա. Մահրադյանն ասաց, որ ամբիոնի նիստում քննարկել են հաշվետվությունները և համաձայն են նախագահի առաջարկությունների և դիտողությունների հետ: Աշխատանքները բարձր են գնահատվել դրա համար դիտողությունները քիչ են: Գ. Դեմիրխանյանը ավելացրեց, որ ոչ մի մասնագիտությունից ոչ մի բողոքարկում չի եղել, հետևաբար գնահատականի փոփոխություն ևս չկա: Ա. Գրիգորյանն անցավ ֆիզիկա մասնագիտության հեռակա բակալավրիատի, մասնագիտական մանկավարժություն՝ ֆիզիկա մասնագիտական ծրագրի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությանը, նա նշեց, որ հաշվետվության մեջ առկա է ամփոփիչ ատեստավորմանը մասնակցած շրջանավարտների քանակը՝ 4, և ցուցաբերած արդյունքները, ամփոփիչ ատեստավորման գործընթացի SWOT վերլուծություն՝ Ուժեղ կողմեր.

- Բոլոր ուսանողները պատրաստել էին զեկուցման ցուցադրություն:
- Աշխատանքները բավարարում էին ավարտական աշխատանքներին ներկայացվող պահանջները:
- Աշխատանքներում հստակ ձևակերպված էին «նպատակը» և «խնդիրները» բաժինները:
- Աշխատանքները պարունակում էին փորձարարական մաս: Թույլ կողմեր.
- Բացակայում էին փորձարարական մասի մանրամասն նկարագրությունները:
- Եզրակացությունները երբեմն հստակ ձևակերպված չէին:
- Ուսանողների խոսքը ներկայացման ժամանակ կաղում էր՝ նկատելի էր փորձառության պակասը:
- Գրախոսությունները հաճախ կրում էին ձևական բնույթ:
- Ոչ բոլոր թեմաներն էին առնչվում ֆիզիկայի դպրոցական դասընթացի հետ: Հնարավորություններ.
- Ավարտական աշխատանքների թեմաները մոտեցնել ֆիզիկայի դպրոցական դասընթացին՝ ուշադրություն դարձնելով մեթոդական հարցերին:
- Ավելի շատ ուշադրություն դարձնել ինքնուրույն կատարած աշխատանքի բովանդակությանը:
- Ավելի հստակ ձևակերպել աշխատանքի «եզրակացություններ» բաժինը՝ ներառելով ստացված արդյունքներից բխող առաջարկություններ: Սպառնալիքներ.
- Որոշ ուսանողների մոտ թերի բազային կրթությունը:
- Կատարված հետազոտությունների հետագա գործնական կիրառությունների բացակայությունը: Եզրակացություն և առաջարկություն մասնագետների պատրաստման գործընթացի որակի հետագա բարելավման ուղղությամբ՝ Կարծում եմ, որ գիտական ղեկավարները ավելի ինտենսիվ պետք է աշխատեն ուսանողի հետ՝ լրացնելով ավարտական աշխատանքի թեմայի հետ առնչվող նրանց գիտելիքների, աշխատանքի ներկայացման փորձի պակասը: Անհրաժեշտ է նաև որպես ավարտական աշխատանքի թեմաներ ընտրել ֆիզիկայի դպրոցական

դասընթացի մեջ ընդգրկված թեմաները՝ առանձնակի ուշադրություն դարձնելով դասավանդման մեթոդիկայի հարցերին: Համարյա նույնն է գրված առկա բակալավրիատի (2) մասնագիտական մանկավարժություն՝ ֆիզիկա մասնագիտական ծրագրի և առկա մագիստրատուրայի (8) ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունների մեջ:

Գ. Դեմիքիսանյանը անդրադարձավ նրան, որ եթե եզրակացություն չկա, ապա այնտեղ նաև աշխատանք չկա: Ա. Գրիգորյանն էլ ավելացրեց, որ մեր թույլ կողմերից է եզրակացությունը և որ այստեղ, հաշվետվության մեջ, վերջապես անդրադարձան այն հարցին, որ մագիստրոսները ևս պետք է անցնեն պրակտիկա դպրոցում: Գ. Դեմիքիսանյանն ասաց, որ ֆիզիկայից կային թեզեր, որոնք զուտ գիտական էին, բայց մեր թեմաները պետք է կապված լինեն մանկավարժության հետ: Ն. Բաբաջանյանն էլ մեկնաբանեց այդ փաստը նրանով, որ ֆիզիկայի բոլոր բաժինները ներառված են ֆիզիկայի դպրոցական դասընթացում ուրեմն բոլոր թեմաներն էլ ունեն մանկավարժական բաղադրիչ:

Ա. Գրիգորյանը շարունակեց հաշվետվությունների ընթերցումը: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվության մեջ (առկա բակալավրիատի մասնագիտական մանկավարժություն՝ մաթեմատիկա մասնագիտական ծրագրի) առկա է ամփոփիչ ատեստավորմանը մասնակցած շրջանավարտների քանակը՝ 43, և ցուցաբերած արդյունքները, ամփոփիչ ատեստավորման գործընթացի SWOT վերլուծություն՝ Ուժեղ կողմեր. Բոլոր ուսանողները պատրաստել էին զեկուցման ցուցադրություն, զեկուցումների ցուցադրություններն հիմնականում ըստ էության էին, դրանց տևողությունը համապատասխանում էր հատկացված ժամանակին: Աշխատանքները համապատասխանում էին ավարտական աշխատանքներին ներկայացվող տեխնիկական պահանջներին: Ղեկավարների կողմից առաջարկված մի շարք թեմաներ հիրավի արդիական էին: Թեմաներում արծարծվող խնդիրները թեզերի հեղինակները փորձարկել էին դպրոցներում: Հնարավորություններ՝ Կարծում ենք, որ կարելի էր հնարավորություն ստեղծել մաթեմատիկական բաղադրիչն ավելացնել ուսումնասիրվող թեմաներում, հնարավորություն տալ ուսանողներին ինքնուրույն թեմաներ առաջադրել, արծարծվող խնդիրները փորձարկել տարբեր դպրոցներում: Թույլ կողմեր. Ուսանողները հիմնականում կարդում էին ցուցադրությունները: Գրականության ցանկերում առկա էին արդիականությունը կորցրած հղումներ: Մեթոդական առաջարկություններ հազվադեպ էին հանդիպում: Գրեթե չկային հղումներ մերօրյա աղբյուրներին: Երբեմն ներկայացվող առաջարկների օգտակարությունը փորձարկում չէր անցել, իսկ ավելի հաճախ՝ փորձարկումներն արվել էին փոքրաթիվ աշակերտներով դասարաններում: Եզրակացությունները երբեմն միարժեքորեն չէին բխում «կատարված փորձարկումներ: Սպառնալիքներ. Կարծում ենք, որ որպես կանոն օգտագործվում էր /տվետական և ռուսական/ ժամանակավրեպ գրականություն, թեզերի պատրաստման ընթացքում միայն հնացած գրականություն օգտագործելը ստեղծում է հետընթացի սպառնալիք: Տեղեկատվության արդիական ռեսուրսների անտեսումը կարող է հանգեցնել ոչ ճիշտ եզրահանգումների:

Եզրակացություն և առաջարկություն մասնագետների պատրաստման գործընթացի որակի հետագա բարելավման ուղղությամբ՝ Բոլոր ուսանողները պատրաստել էին զեկուցման ցուցադրություն: Դրանք երբեմն ըստ էության էին, սակայն հաճախ սկսվում էին թեմայի անհարկի ընդհանրական գովերգումով՝ առանց արդիականության առարկայական հիմնավորման: Զեկուցումների տևողությունը համապատասխանում էր հատկացված ժամանակին, իսկ աշխատանքները՝ ավարտական աշխատանքին ներկայացվող տեխնիկական պահանջներին: Թեմաները հիմնականում արդիական էին: Թեզերի հեղինակները արծարծվող խնդիրները երբեմն, ոչ բոլոր դեպքերում, փորձարկել էին դպրոցներում: Բազմաթիվ էին ուղղագրական և տեխնիկական բնույթի վրիպակները: Որոշ կարծիքներ և գրախոսություններ այնքան էլ չէին համապատասխանում տվյալ աշխատանքի բովանդակությանը և որակին: Իրապես մեթոդական առաջարկություններ հազվադեպ էին հանդիպում: Գրեթե չկային հղումներ մերօրյա աղբյուրներին: Կառաջարկելիք թեզերի պատրաստման ընթացքում օգտագործել առավելապես՝ 21-րդ դարի գրականություն, ինչպես նաև տեղեկատվության զանազան արդիական ռեսուրսներ: Համարյա նույնն է գրված առկա մագիստրատուրայի(12) մասնագիտական մանկավարժություն՝ մաթեմատիկա մասնագիտական ծրագրի և հեռակա բակալավրիատի (11) ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունների մեջ:

Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Լ. Ղուլդագարյանն ասաց, որ իրենք համամիտ են արված դիտողությունների և առաջարկությունների հետ: Գ. Դեմիրխանյանը իր մտահոգությունը հայտնեց այնատուժով, որ թույլ կողմերում գրված է, որ մեթոդական առաջարկություններ հազվադեպ էին հանդիպում: Այստեղ կարելի է ֆիքսել մի փաստ, որ մագիստրոսական թեզի ձևի առումով եզրակացությունները որոշ չափով պետք է նման լինեն ատենախոսությունների եզրակացությանը: Ցանկալի է, որ թեզերին ներկայացվող պահանջները տպագրվեն, որ ավելի հասկանալի լինի:

Առկա մագիստրատուրայի, մասնագիտական մանկավարժություն՝ ինֆորմատիկա մասնագիտական ծրագրի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվության մեջ առկա է ամփոփիչ ատեստավորմանը մասնակցած շրջանավարտների քանակը՝ 3, և ցուցաբերած արդյունքները, ամփոփիչ ատեստավորման գործընթացի SWOT վերլուծություն՝

Ուժեղ կողմեր. Մագիստրոսական թեզերը համապատասխանում էին ՀՊՄՀ-ի կողմից ներկայացվող պահանջներին: Պաշտպանություններն ու գնահատման փուլը կազմակերպված էր թափանցիկ, առանց կողմնակի ազդեցության: Ներկայացված աշխատանքերը կիրառական բնույթի էին: Մագիստրոսների ելույթները հիմնականում հստակ ներկայացնում էին կատարված աշխատանքները:

Թույլ կողմեր. Կատարված աշխատանքներում առկա էին հետազոտական բացեր: Ուսանողը տեսնում էր հանձնաժողովի անդամների կողմից դրվող անհատական գնահատականները, ինչը էթիկայի խախտում է, ուսանողը պետք է իմանա միայն ձևավորված վերջնարդյունքը:

Հնարավորություններ. Մագիստրոսական թեզերի կիրառությունը փաստել ներդրման ակտերով, ինչը կուժեղացնի աշխատանքը:

Սպառնալիքներ. Կիրառական աշխատանքներում հետազոտության բացերը կարող են բերել մշակված համակարգերի աշխատանքի խափանումների:

Եզրակացություն և առաջարկություն մասնագետների պատրաստման գործընթացի որակի հետագա բարելավման ուղղությամբ՝

Հանձնաժողովն իր գոհունակությունն է արտահայտում մասնագետների պատրաստման որակի՝ վերաբերյալ և առաջարկում է մագիստրոսական թեզերի կատարման ընթացքում, ըստ թեմաների՝ ուղղվածության համագործակցել դպրոցների և նախակրթարաններ հետ, ինչը մագիստրոսներին հնարավորություն կընձեռնի կատարվող աշխատանքի վերաբերյալ խորքային հետազոտություններ կատարել:

Համարյա նույնն է գրված առկա բակլավրիատի (15) մասնագիտական մանկավարժություն՝ ինֆորմատիկա մասնագիտական ծրագրի և հեռակա բակլավրիատի (17) ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունների մեջ:

Ձ. Սրապիոնյանն ասաց, որ ամբիոնում քննարկել են հաշվետվությունները: Ա. Գրիգորյանն ուշադրություն հրավիրեց այն փաստի վրա, որ այստեղ հանձնաժողովը հնարավորություն է տեսնում, որ մագիստրոսական թեզերի կիրառությունը փաստեն ներդրման ակտերով: Հուսով եմ, որ դիտողությունները հաշվի կառնենք, ասաց Գ. Դեմիրխանյանը: Հ. Միքայելյանն առաջարկեց, որ այս հարցի վերաբերյալ կարելի էր զեկուցում պատրաստել, նախապես համեմատել, ընդհանրացնել, վեր հանել դիտողությունները և առաջարկությունները, վերջում ամբիոններին տրվեր գրավոր հանձնարարականներ (խորհուրդը գրավոր որոշում ընդունի և ուղարկի ամբիոններին): Մյուս տարի հաշվի կառնենք, հավաստեց Գ. Դեմիրխանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. - Ընդունել ի գիտություն

Ընթացիկ հարցեր.

ա). **ԼՄԵՑԻՆ.** – ֆակուլտետի ներկայացման հարցը համալսարանի կայք էջում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Հ. Միքայելյանը առաջարկեց ընթացիկ հարցերի շրջանակում քննարկել ֆակուլտետի ներկայացման հարցը համալսարանի կայք էջում: Նա ասաց, որ ամբիոնն արդեն «Մաթեմատիկական կրթություն» 10-րդ միջազգային կոնֆերանսն է արել, իսկ կայքում 6-րդն է տեղադրված, «Մաթեմատիկական դպրոցում» ամսագիր ենք տպում, իսկ այնտեղ այդ մասին ոչինչ չկա: Մեր գիտական աշխատանքները չեն երևում: Գ. Դեմիրխանյանը բացատրեց, որ կայքի թարմացումը տեղի է ունենում ամեն տարվա սկզբում: Ամբիոնները նյութը տալիս են կայքը

կարգավորողին և նա էլ տեղադրում է: Ֆակուլտետի էջում ամեն անգամ թարմացումներ կատարվում են: Վ. Վարդազարյանը նշեց, որ պատմաբանները, արվեստագետները այդ առումով շատ ակտիվ են և առաջարկեց ֆակուլտետում և ամբիոններում ֆիքսել նրանց, ովքեր զբաղվելու են դրանով: Գ. Դեմիրխանյանն առաջարկեց սեպտեմբերին և հունվարին ամբիոնները նիստ անեն և որոշեն ինչ դնեն, ինչ թարմացնեն: Դա պետք է համակարգված լինի և անել մակարդակով ու պատասխանատվությամբ: Հ. Միքայելյանն ավելացրեց, որ ավելի լավ է գրավոր հանձնարարականներ լինեն ամբիոններին: Գ. Դեմիրխանյանն ասաց, որ մեր կայքը միակն է որում կա էլեկտրոնային գրադարան, ուսանողների համար ըստ մասնագիտությունների համապատասխան գրականություն, նույնիսկ մեր դասախոսների կողմից գրված և լինում են դեպքեր երբ հեղինակը էլեկտրոնային տարբերակը չի տրամադրում և մեր խնդրանքը մերժում է: Իրականում կարելի է տրամադրել մասակիտներն՝ վերնագիրը, բովանդակությունը, ներածություն և մի քանի էջ, դրանով հետաքրքրվածները կգնեն նաև գիրքը: Հ. Միքայելյանն ասաց, որ Սլավոնական համալսարանի միջոցով նա տպել է աշակերտի անկյուն գրքերի շարքը՝ թվով 14 գիրք, իսկ մեր համալսարանը ոչ մի հատ չի գնել:

ՈՐՈՇԵՑԻՆ. - Ամբիոններին հանձնարարել սեպտեմբերին և հունվարին զբաղվել կայքի համապատասխան էջի թարմացումով:

բ). **ԼՄԵՑԻՆ.** - Տեխնոլոգիա ամբիոնի հայցորդ Դավիթ Պետրոսյանի ատենախոսության թեմայի վերնագրի և ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Ա. Գրիգորյանը ներկայացրեց, որ տեխնոլոգիա ամբիոնի ընդլայնված նիստից, որին ներկա է եղել նաև մանկավարժության տեսության ամբիոնի դոցենտ Լաուրա Ասատրյանը, ստացել է քաղվածք ամբիոնի հայցորդ Դավիթ Պետրոսյանի «Տեխնոլոգիա» և դպրոցական պարտադիր առարկաների շրջանակներում զարդագործական արվեստ դասընթացի դասավանդման մեթոդիկան» վերնագրով ատենախոսության թեմայի և ղեկավարի՝ Լ. Ասատրյան, հաստատման վերաբերյալ: Բացի քաղվածքից չեն ներկայացրել թեմայի հիմնավորումը, արդիականությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. - Այդ հարցը թողնել հաջորդ նիստին փաստաթղթերի թերի լինելու պատճառով:

գ). **ԼՄԵՑԻՆ.** - Չուգակցված մասնագիտությունների պլանների քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Գ. Դեմիրխանյանը տեղեկացրեց, որ մի քանի օր առաջ ռեկտորի հետ հանդիպում էր և ՄՖԻ-ն մասնակցում էր քիմիկոսների հետ, թերևս նմանատիպ խնդիրներ ունենալու համար միացրել էին: Այդ հանդիպմանը կար հիմնականում երկու կարևոր հարց. 1. Ուսուցիչների վերապատրաստման խնդիրն էր, որը մեր մոտ լավ է ընթանում և 2. Ուսումնական պլանների համապատասխանությունը դպրոցական դասընթացների հետ, հիմնականում զուգակցված մասնագիտությունների՝ մաթեմատիկա-ֆիզիկա և մաթեմատիկա-ինֆորմատիկա առումով: Անհանգստությունը այն է, որ այդ պլանները ռեալ փորձաքննություն չեն անցել: Գ. Դեմիրխանյանն ասաց, որ այդ ծրագրերը գրվել են շատ սուղ ժամանակահատվածում և իր կողմից տրված հանձնարարականներով ամբիոնի վարիչները միասին նստել և որոշել են բոլոր խնդրահարույց հարցերը այնուհետև ամբիոններում եղել են քննարկումներ և գրվել են ծրագրերը: Այնուհետև դա պետք է անցնեն գիտ խորհրդով և մենք դա արել ենք հարցման միջոցով: Տ-ն Գևորգյանըն առաջարկեց, որ եթե ինչ-որ բաներ այնպես չեն եթե ինչ-որ փոփոխության անհրաժեշտություն գտնեք, ապա արձակուրդից հետո կանենք մասնակի փոփոխություններ: Այդ կապակցությամբ հորդորում եմ, որ 29-ին կամ ավելի շուտ անենք մեթոդական խորհրդի նիստ, նայենք և հաստատենք: Մինչև մեր մեթոդական խորհուրդը ամբիոններումնորից քննարկեք, որպեսզի հետագայում ստիպված չլինենք նորից անդրադառնալ: Սա պետք է արվի մինչև հուլիսի 7-ը՝ և՛ ամբիոնի նիստը, և՛ մեթոդական խորհուրդը: Խնդիրը բովանդակային մասն է, որի համար կարող է մեզ քարկոծեն: Լ. Ղուլդազարյանը բացատրեց, որ մի քանի պատճառներով հիմա ամբիոնը ի վիճակի չէ զբաղվելու այդ հարցով, որովհետև վաղը ամբիոնի նիստ է և դրանով փակում ենք մեր ամբողջ տարվա աշխատանքները, երկրորդ՝ ուսուցիչների վեց խումբ ենք վերապատրաստում և ցանկալի է այդ աշխատանքը թողնել արձակուրդից հետո, թեկուզ սեպտեմբեր ամսին: Մինևույն է մենք անդրադառնալու ենք ուսումնական պլաններին, այն ժամանակ էլ կանդրադառնանք այդ հարցին քանի որ մինչև հավատարմագրումը պլաններում փոփոխություն անել չենք կարող: Հ. Միքայելյանն ասաց, եթե տեխնիկապես հնարավոր չէ ոփոխություն անել, հիմա քննարկվի թե սեպտեմբերին տարբերություն չի տեսնում: Որքա՞նով են մեր ուսումնական պլանները համապատասխանում ուսուցչական չափանիշների հետ, դա է կարևոր: Ինձ թվում է, որ

մեր ծրագրերով ուսուցիչներ չենք պատրաստում: Գ. Դեմիրխանյանը բացատրեց, որ քննարկել չի նշանակում փոփոխություններ անել, այլ նշանակում է վավերացնել, իսկ վավերացնելուց հետո պատասխանատվություն կրել այդ ամենի համար: Լ. Ղուլղազարյանը նշեց, որ մենք մի պրոբլեմ էլ ունենք կապված այն փաստի հետ, որ դպրոցները անցնում են գնահատման կրեդիտային համակարգի: Այո, այս դեպքում ոչ թե վերնագիրն է կարևոր, այլ համապատասխան առարկայի բուն ծրագիրը, լրացրեց Գ. Դեմիրխանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. - Ուսումնական պլանների քննարկումը տեղափոխել արձակուրդներից հետո:

ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի նիստի
նախագահ՝



Է. Դեմիրխանյան

Խորհրդի նիստի քարտուղար՝

Ա.Ն. Գրիգորյան